



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

26 հուլիսի 2016 թվականի

թիվ 88

քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացը՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011)

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով, արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու ընթացքում տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության 30-րդ կետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) եւ առաջնորդվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ, տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման մեխանիզմների կատարելագործման նպատակով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացը՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով, արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու ընթացքում տեղեկատվական փոխգործակցության կանոնները.

«Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանությունը գնահատելու վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացը՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով, արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացը՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով, արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացը՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով, արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործման համար օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների ձեւաչափերի եւ կառուցվածքների նկարագրությունը.

«Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացին՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով միանալու կարգը:

2. Սահմանել, որ սույն Որոշմամբ հաստատված նկարագրությամբ նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների տեխնիկական սխեմաների մշակումը եւ արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում

տեղեկատվական փոխգործակցության իրագործման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրում դրանց տեղադրման ապահովումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն դեպարտամենտի կողմից, որի իրավասության մեջ է մտնում Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգումը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 180 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի
նախագահի ժամանակավոր պաշտոնակատար՝

Կ. Մինասյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հուլիսի 26-ի
թիվ 88 որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ

«Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացը՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011)

Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով, արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու ընթացքում տեղեկատվական փոխգործակցության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոնները մշակվել են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող հետեւյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու ընթացքում տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի «Տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման վերաբերյալ հիմնադրույթը հաստատելու մասին» թիվ 225 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 9-ի «Տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի հաստատման, տեխնիկական կանոնակարգին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին ծանուցման, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականի եւ տրանսպորտային միջոցի՝ դրա կառուցվածքում կատարված փոփոխություններով, անվտանգության պահանջներին համապատասխանության մասին վկայականի ձեւաթղթերի լրացման կանոնների մասին» թիվ 232 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունվարի 27-ի «Արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» թիվ 5 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 29 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրման մեթոդիկայի մասին» թիվ 63 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների՝ միմյանց միջեւ եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ժամանակ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման վերաբերյալ հիմնադրույթը հաստատելու մասին» թիվ 125 որոշում:

II. Կիրառության ոլորտը

2. Սույն Կանոնները մշակվել են տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձեւավորում եւ վարում»

ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև տեղեկատվական փոխգործակցության կարգը եւ պայմանները սահմանելու (այսուհետ համապատասխանաբար՝ ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի ընդհանուր ռեեստր, ընդհանուր գործընթաց), այդ թվում՝ այդ ընդհանուր գործընթացի շրջանակներում կատարվող ընթացակարգերը նկարագրելու նպատակով:

3. Սույն Կանոնները կիրառվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը վերահսկելիս, ինչպես նաեւ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչները նախագծելիս, մշակելիս եւ լրամշակելիս:

III. Հիմնական հասկացությունները

4. Սույն Կանոնների նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«ավտորիզացում»՝ ընդհանուր գործընթացի կոնկրետ մասնակցին որոշակի գործողությունների կատարման իրավունքների տրամադրում.

«համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթուղթ»՝ փաստաթուղթ, որով հաստատվում է տեխնիկական կանոնակարգման օբյեկտի համապատասխանությունը Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերին (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերին) կամ փաստաթուղթ, որը տրամադրվել (ընդունվել) է այն արտադրանքի համար, որը ներառված է միասնական ձեւի համապատասխանության հավաստագրերի ու համապատասխանության հայտարարագրերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր հաստատման ենթակա արտադրանքի միասնական ցանկում.

«համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրներ»՝ ազգային մասերից

բաղկացած տեղեկատվական այնպիսի ռեսուրսներ, որոնց ձեւավորումն ու վարումն ապահովում են Միության անդամ պետությունների լիազորված մարմինները:

Սույն Կանոններում օգտագործվող «ընդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ», «ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտ», «կատարող», «ընդհանուր գործընթացի գործառնություն», «ընդհանուր գործընթացի ընթացակարգ» եւ «ընդհանուր գործընթացի մասնակից» հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրման մեթոդիկայով սահմանված իմաստներով:

IV. Հիմնական տեղեկություններ ընդհանուր գործընթացի վերաբերյալ

5. Ընդհանուր գործընթացի լրիվ անվանումը՝ «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձեւավորում եւ վարում»: Ընդհանուր գործընթացն իրականացվում է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրին վերաբերող մասով:

6. Ընդհանուր գործընթացի ծածկագրային նշագիրը՝ P.TS.07, տարբերակը՝ 1.0.0:

1. Ընդհանուր գործընթացի նպատակը եւ խնդիրները

7. Ընդհանուր գործընթացի նպատակը համապատասխանության գնահատման մասին տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրներից տեղեկությունների ձեւավորման եւ ընդհանուր գործընթացի մասնակիցներին դրանց ներկայացման մեխանիզմների կատարելագործումն է:

8. Ընդհանուր գործընթացի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

ա) ապահովել համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ազգային մասերից Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) լիազորված մարմինների տրամադրած տեղեկությունների՝ արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ինտեգրված համակարգ) միջոցներով ստացումը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից եւ դրանց հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում.

բ) ապահովել շահագրգիռ անձանց կողմից Միության տեղեկատվական պորտալում համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի մասին տեղեկությունների ստացման հնարավորությունը.

գ) ապահովել անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից՝ ինտեգրված համակարգի միջոցներով համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի ստացումը համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ազգային մասերից.

դ) ապահովել միասնական դասակարգիչների եւ տեղեկատուների օգտագործումն ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից.

2. Ընդհանուր գործընթացի մասնակիցները

9. Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը բերված է 1-ին աղյուսակում:

Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.ACT.001	Հանձնաժողով	Միության տեղեկատվական պորտալում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասերից վերցված տեղեկությունների հասանելիությունն ապահովող Միության մարմին, որը տեղեկություններ է ստանում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասերից եւ ապահովում է նշված տեղեկությունների հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում
P.TS.07.ACT.001	շահագրգիռ անձ	իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը հարցում է կատարում եւ տեղեկություններ ստանում Միության տեղեկատվական պորտալում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրից
P.TS.07.ACT.002	անդամ պետության լիազորված մարմին	անդամ պետության լիազորված մարմին, որն իրականացնում է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասի ձեւավորումն ու վարումը եւ Հանձնաժողով տեղեկություններ է ներկայացնում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասից, ինչպես նաեւ տեղեկություններ համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթի մասին՝ ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասից՝ մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների հարցումների հիման վրա
P.TS.07.ACT.003	անդամ պետության՝ հարցում կատարող լիազորված մարմին	անդամ պետության լիազորված մարմին, որը դիմում է մյուս անդամ պետությանը՝ ՄՄ ՏԿ 018/2011-ի

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
		փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասից համապատասխանության գնահատման մասին փաստաթղթին առնչվող տեղեկություններ ստանալու հարցմամբ

3. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

10. Ընդհանուր գործընթացը հետևյալ ընթացակարգերի ամբողջությունն է՝

ա) ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում.

բ) ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում.

գ) ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկությունների ստացում:

11. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերի կատարման շրջանակներում անդամ պետությունների լիազորված մարմիններն իրականացնում են ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասերի ձեռնարկում և ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասերից տեղեկություններ են ներկայացնում Հանձնաժողով, ինչպես նաև անդամ պետությունների՝ հարցում կատարող լիազորված մարմիններ: Հանձնաժողովը մշակում է ստացված տեղեկատվությունը և ապահովում տվյալ տեղեկությունների հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում:

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգը (P.TS.07.PRC.001) և «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգը (P.TS.07.PRC.002)

կատարելիս՝ անդամ պետությունների լիազորված մարմինները Հանձնաժողով տեղեկություններ են ներկայացնում ՄՄ ՏԿ 018-2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասերից:

Նշված տեղեկությունների ներկայացումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հուլիսի 26-ի թիվ 88 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան (այսուհետ՝ Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ)՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով տեղեկատվական փոխգործակցության՝ «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացը արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս:

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.TS.07.PRC.003) կատարելիս՝ անդամ պետության՝ հարցում կատարող լիազորված մարմինը մյուս անդամ պետության ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկություններ է ստանում համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթի մասին:

Նշված տեղեկությունների ներկայացումը եւ դրանք ստանալու համար կատարվող հարցումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հուլիսի 26-ի թիվ 88 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան (այսուհետ՝ Անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ)՝ տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով տեղեկատվական փոխգործակցության՝ «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացը արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս.

Ընդհանուր գործընթացի ընթացակարգերի կատարման շրջանակներում ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հուլիսի 26-ի թիվ 88 որոշմամբ հաստատված՝ Էլեկտրոնային այն փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը (այսուհետ՝ Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրություն), որոնք օգտագործվում են տրանսպորտային միջոցի տիպի, ամրաշրջանակի տիպի տրամադրված հաստատումների, տրանսպորտային միջոցի կառուցվածքի

անվտանգության մասին վկայականների եւ «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը չեղարկելու մասին գրանցված ծանուցումների միասնական ռեեստրին վերաբերող մասով «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի միասնական ռեեստրների ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացը արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս.

Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի, ինչպես նաեւ անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է ինտեգրված համակարգի օգտագործմամբ: Շահագրգիռ անձանց համար ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրից տեղեկությունների հասանելիությունն ապահովվում է Միության տեղեկատվական պորտալի միջոցով:

12. Ընդհանուր գործընթացի կառուցվածքի՝ բերված նկարագրությունը ներկայացված է 1-ին նկարում:



ՆԿ. 1. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

13. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերի կատարման կարգը՝ ներառյալ գործառնությունների մանրամասն նկարագրությունը, բերված է սույն Կանոնների VIII բաժնում:

14. Սույն բաժնում բերվում է ընդհանուր գործընթացի ընթացակարգերի միջև առկա կապերը եւ դրանց կատարման կարգն արտացոլող ընդհանուր սխեման: Ընթացակարգերի ընդհանուր սխեման կառուցված է UML (մոդելավորման միասնականացված լեզու՝ Unified Modeling Language) գրաֆիկական նոտացիայի օգտագործմամբ եւ ապահովված է տեքստային նկարագրությամբ:

4. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

15. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 2-րդ աղյուսակում:

Ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.07.PRC.001	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում	ընթացակարգի կատարման ընթացքում անդամ պետության լիազորված մարմնի կողմից ներկայացվում են ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված՝ համապատասխանության գնահատման վերաբերյալ նոր փաստաթղթերի մասին տեղեկություններ՝ դրանք Միության տեղեկատվական պորտալում հրապարակելու համար
P.TS.07.PRC.002	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում	ընթացակարգի կատարման ընթացքում անդամ պետության լիազորված մարմնի կողմից ներկայացվում են ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված՝ համապատասխանության գնահատման վերաբերյալ փոփոխված փաստաթղթերի մասին տեղեկություններ՝ դրանք Միության տեղեկատվական պորտալում հրապարակելու համար
P.TS.07.PRC.003	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկությունների ստացում	կատարվում է անդամ պետության՝ հարցում կատարող լիազորված մարմնի կողմից՝ մյուս անդամ պետության ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասից համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթի մասին տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում

V. Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտները

16. Տեղեկատվական այն օբյեկտների ցանկը, որոնց վերաբերյալ կամ որոնցից տեղեկությունները փոխանցվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև տեղեկատվական փոխգործակցության ընթացքում, բերված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Տեղեկատվական օբյեկտների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.07.BEN.001	ՄՍ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստր	ՄՍ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասերում պարունակվող՝ համապատասխանության գնահատման վերաբերյալ տրամադրված կամ ընդունված փաստաթղթերի մասին տեղեկություններ

VI. Ընդհանուր գործընթացի մասնակիցների պատասխանատվությունը

17. Տեղեկությունների ամբողջական ու ժամանակին փոխանցումն ապահովելուն առնչվող պահանջները չկատարելու համար Հանձնաժողովի՝ տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող պաշտոնատար անձանց եւ աշխատակիցներին կարգապահական պատասխանատվության ենթարկելն իրականացվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրին, Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան, իսկ անդամ պետության լիազորված մարմինների պաշտոնատար անձանց եւ աշխատակիցներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

VII. Ընդհանուր գործընթացի տեղեկատուները եւ դասակարգիչները

18. Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը բերված է 4-րդ աղյուսակում:

Աղյուսակ 4

Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տիպը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.008	կապի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է կապի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը (ներդաշնակեցված է ՄԱԿ-ի՝ Առեւտրի ընթացակարգերի եւ էլեկտրոնային բիզնես գործառնությունների պարզեցմանն ուղղված կենտրոնի (ՄԱԿ ԱԷՊԿ) «Communication Channel Code» դասակարգչի հետ)
P.CLS.009	չափման միավորների միջազգային դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է չափման միավորների ծածկագրերի եւ անվանումների ցանկը՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի թիվ 20 հանձնարարականին համապատասխան
P.CLS.019	աշխարհի երկրների միջազգային դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է աշխարհի երկրների ծածկագրերի եւ անվանումների ցանկը՝ ISO 3166-1 ստանդարտին համապատասխան
P.CLS.024	լեզուների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է լեզուների ծածկագրերի եւ անվանումների ցանկը՝ ISO 639-1 ստանդարտին համապատասխան
P.CLS.048	հասցեների տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է հասցեների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տիպը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.053	Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների մշակման արդյունքի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների մշակման արդյունքի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.CLS.054	կազմակերպարարական ձևերի դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է կազմակերպարարական ձևերի ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.CLS.057	համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է համապատասխանության գնահատման վերաբերյալ փաստաթղթերի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.CLS.058	փաստաթղթի գործողության կարգավիճակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է փաստաթղթի գործողության կարգավիճակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.CLS.059	տեխնիկական կանոնակարգման օբյեկտների տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է տեխնիկական կանոնակարգման օբյեկտների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.CLS.068	տնտեսավարող սուբյեկտների նույնականացման մեթոդների տեղեկատու	տեղեկատու	պարունակում է տնտեսավարող սուբյեկտների նույնականացման մեթոդների նույնականացուցիչների եւ անվանումների ցանկը
P. CLS.073	տրանսպորտային միջոցների մակնիշների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների մակնիշների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.TS.07.CLS.002	տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների կատեգորիաների դասակարգիչ՝ Եվրասիական տնտեսական միության	դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների կատեգորիաների


Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տիպը	Նկարագրությունը
1	2	3	4
	տեխնիկական կանոնակարգերին համապատասխան		ծածկագրերի ու անվանումների ցանկը՝ Միության տեխնիկական կանոնակարգերին համապատասխան
P.TS.07.CLS.003	տրանսպորտային միջոցների եւ տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների էկոլոգիական դասերի տեղեկատու	տեղեկատու	պարունակում է տրանսպորտային միջոցների եւ տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների էկոլոգիական դասերի ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.TS.07.CLS.004	տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների պատրաստման տարբերակների տեղեկատու	տեղեկատու	պարունակում է տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների պատրաստման տարբերակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.TS.07.CLS.005	տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների հանգույցների տեսակների տեղեկատու	տեղեկատու	պարունակում է տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների հանգույցների օգտագործվող տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.TS.07.CLS.006	տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների կախոցների տեսակների ցանկ	տեղեկատու	պարունակում է տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների կախոցների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.TS.07.CLS.007	տրանսպորտային միջոցի, տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի, ինքնագնաց մեքենայի եւ տեխնիկայի այլ տեսակների երկայնակի առանցքի նկատմամբ ղեկանիվի դիրքերի ցանկ	տեղեկատու	պարունակում է տրանսպորտային միջոցի, տրանսպորտային միջոցի ամրաշրջանակի, ինքնագնաց մեքենայի եւ տեխնիկայի այլ տեսակների երկայնակի առանցքի նկատմամբ ղեկանիվի դիրքերի ծածկագրերի եւ անվանումների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տիպը	Նկարագրությունը
1	2	3	4
P.TS.07.CLS.008	տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների էլեկտրամեքենաների տեսակների ցանկ	տեղեկատու	պարունակում է տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների էլեկտրամեքենաների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.TS.07.CLS.009	տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների արգելակման համակարգերի տեսակների ցանկ	տեղեկատու	պարունակում է տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների արգելակման համակարգերի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.TS.07.CLS.010	տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների զանգվածների տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների զանգվածների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.TS.07.CLS.011	տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների վառելիքի տեսակների տեղեկատու	տեղեկատու	պարունակում է տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների վառելիքի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.TS.07.CLS.012	տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակներ պատրաստողների տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների, տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների, ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակներ պատրաստողների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը

VIII. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում»
 ընթացակարգ (P.TS.07.PRC.001)

19. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.001) կատարման սխեման ներկայացված է 2-րդ նկարում:



Նկ. 2. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.001) կատարման սխեմա

20. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգը (P.TS.07.PRC.001) կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում նոր փաստաթղթի մասին տեղեկություններ ներառելիս:

21. Առաջինը կատարվում է «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.TS.07.OPR.001), որի կատարման արդյունքների հիման վրա անդամ պետության լիազորված մարմինը Հանձնաժողով է ուղարկում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկություններ:

22. Հանձնաժողով ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկություններ ստացվելիս՝ կատարվում է «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.07.OPR.002), որի կատարման արդյունքների հիման վրա Հանձնաժողովը ստանում է նշված տեղեկությունները, կատարում է դրանց մշակումը եւ անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը:

23. Անդամ պետության լիազորված մարմին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում ստացվելու դեպքում կատարվում է «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների մշակման արդյունքների վերաբերյալ ծանուցման ստացում» գործառնությունը (P.TS.07.OPR.003), որի կատարման արդյունքների հիման վրա անդամ պետության՝ տեղեկություններն ուղարկված լիազորված մարմինն իրականացնում է տեղեկությունների մշակման արդյունքների մասին ստացված ծանուցման մշակումը:

24. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.07.OPR.002) կատարելիս՝ կատարվում է «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների հրապարակում Միության տեղեկատվական պորտալում» գործառնությունը (P.TS.07.OPR.004), որի կատարման արդյունքների հիման վրա Հանձնաժողովն ապահովում է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում:

25. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.001) կատարման արդյունքներն են ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրում նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ներառումը եւ Միության տեղեկատվական պորտալում նշված տեղեկությունների հրապարակումը:

26. Ընդհանուր գործընթացի՝ «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.001) շրջանակներում կատարվող գործառնությունների ցանկը բերված է 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5

Ընդհանուր գործընթացի՝ «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.001) շրջանակներում կատարվող գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.07.OPR.001	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ներկայացում	բերված է սույն Կանոնների 6-րդ աղյուսակում
P.TS.07.OPR.002	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն Կանոնների 7-րդ աղյուսակում
P.TS.07.OPR.003	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում	բերված է սույն Կանոնների 8-րդ աղյուսակում
P.TS.07.OPR.004	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների հրապարակում Միության տեղեկատվական պորտալում	բերված է սույն Կանոնների 9-րդ աղյուսակում

Աղյուսակ 6

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.TS.07.OPR.001) նկարագրություն

Համարը՝ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.07.OPR.001
2	Գործառնության անվանումը	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ներկայացում

Համարը՝ ը/Կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում նոր փաստաթղթի մասին տեղեկություններ ներառելիս
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձևաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը Հանձնաժողով է ուղարկում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունները՝ Անդամ պետության լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունները ներկայացվել են Հանձնաժողով

Աղյուսակ 7

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային
մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների
ընդունում եւ մշակում» գործառնության (P.TS.07.OPR.002)
նկարագրություն

Համարը՝ ը/Կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.07.OPR.002
2	Գործառնության անվանումը	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ավելացված փաստաթղթի մասին տեղեկությունները ստանալիս («ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.TS.07.OPR.001))

Համարը՝ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
5	Սահմանափակումները	<p>ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները ներկայացվում են միայն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից: Էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգի IX բաժնով նախատեսված պահանջներին</p>
6	Գործառնության նկարագրությունը	<p>կատարողն ընդունում է տեղեկությունները եւ ստուգում դրանք՝ Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան: ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ավելացված տեղեկությունների ստուգումը հաջողությամբ կատարելու դեպքում, կատարողը՝</p> <p>իրականացնում է դրանց ներառումը Միության տեղեկատվական պորտալում հրապարակման ենթակա տեղեկությունների մեջ, լրացնում է ներառված տեղեկությունների թարմացման ամսաթիվն ու ժամը.</p> <p>ձեւավորում է հղում Միության՝ համապատասխանության գնահատման մարմինների (ներառյալ սերտիֆիկացման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններին՝ փաստաթուղթը տրամադրած (գրանցած) երկրի եւ անդամ պետության սերտիֆիկացման մարմնի պետական գրանցման նույն ծածկագրով. անդամ պետության լիազորված մարմնին ծանուցում է տեղեկությունների մշակման արդյունքների մասին՝ նշելով տեղեկությունների մշակման արդյունքի ծածկագիրը, որը համապատասխանում է տեղեկությունների՝ Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան ավելացմանը</p>
7	Արդյունքները	<p>ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունները մշակվել են, անդամ պետության լիազորված մարմին ուղարկվել է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը</p>

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային
մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների
մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնության
(P.TS.07.OPR.003) նկարագրություն


Համարը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.07.OPR.003
2	Գործառնության անվանումը	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը կատարողի կողմից ստացվելիս («ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.TS.07.OPR.002))
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը եւ ստուգում է այն՝ Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ստացվել է

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների հրապարակում Միության տեղեկատվական պորտալում» գործառնության (P.TS.07.OPR.004) նկարագրություն

Համարը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.07.OPR.004
2	Գործառնության անվանումը	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների հրապարակում Միության տեղեկատվական պորտալում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է տեղեկություններն ընդունելուց եւ մշակելուց հետո («ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված նոր փաստաթղթի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.TS.07.OPR.002))
5	Սահմանափակումները	չկան
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ապահովում է Միության տեղեկատվական պորտալում տեղեկությունների հրապարակումը
7	Արդյունքները	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունները հրապարակվել են Միության տեղեկատվական պորտալում

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգ (P.TS.07.PRC.002)

27. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.002) կատարման սխեման ներկայացված է 3-րդ նկարում:



Նկ. 3. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.002) կատարման սխեմա

28. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգը (P.TS.07.PRC.002) կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում տեղեկությունները փոփոխելիս:

29. Առաջինը կատարվում է «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.TS.07.OPR.005), որի կատարման արդյունքների հիման վրա անդամ պետության լիազորված մարմինը

Հանձնաժողով է ուղարկում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունները:

30. Հանձնաժողով ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկություններ ստացվելիս՝ կատարվում է «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.07.OPR.006), որի կատարման արդյունքների հիման վրա Հանձնաժողովը ստանում է նշված տեղեկությունները, կատարում է դրանց մշակումը եւ անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը:

31. Անդամ պետության լիազորված մարմին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ստացվելիս՝ կատարվում է «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.TS.07.OPR.007), որի կատարման արդյունքների հիման վրա անդամ պետության՝ տեղեկություններն ուղարկած լիազորված մարմինն իրականացնում է տեղեկությունների մշակման արդյունքների մասին ստացված ծանուցման մշակումը:

32. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.07.OPR.006) կատարելու դեպքում կատարվում է «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների հրապարակում Միության տեղեկատվական պորտալում» գործառնությունը (P.TS.07.OPR.008), որի կատարման արդյունքների հիման վրա Հանձնաժողովն ապահովում է Միության տեղեկատվական պորտալում տեղեկությունների հրապարակումը:

33. «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.002) կատարման արդյունքներն են ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրում փաստաթղթի մասին տեղեկությունների փոփոխումը եւ Միության տեղեկատվական պորտալում նշված տեղեկությունների հրապարակումը:

34. Ընդհանուր գործընթացի՝ «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.002) շրջանակներում կատարվող գործառնությունների ցանկը բերված է 10-րդ աղյուսակում:

Աղյուսակ 10

Ընդհանուր գործընթացի՝ «ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների ներկայացում» ընթացակարգի (P.TS.07.PRC.002) շրջանակներում կատարվող գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.07.OPR.005	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների ներկայացում	բերված է սույն Կանոնների 11-րդ աղյուսակում
P.TS.07.OPR.006	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն Կանոնների 12-րդ աղյուսակում
P.TS.07.OPR.007	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցման ստացում	բերված է սույն Կանոնների 13-րդ աղյուսակում

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.07.OPR.008	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունների հրապարակում Միության տեղեկատվական պորտալում	բերված է սույն Կանոնների 14-րդ աղյուսակում

Աղյուսակ 11

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.TS.07.OPR.005) նկարագրություն

Համարը՝ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.07.OPR.005
2	Գործառնության անվանումը	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների ներկայացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում տեղեկությունները փոփոխելիս
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձևաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը Հանձնաժողով է ուղարկում ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունները՝ Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունները ներկայացվել են Հանձնաժողով

«ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային
մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների
ընդունում եւ մշակում» գործառնության
(P.TS.07.OPR.006) նկարագրություն

Համարը ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.07.OPR.006
2	Գործառնության անվանումը	ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունները ստանալիս («ՄՄ ՏԿ 018/2011-ի փաստաթղթերի միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու մասին տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.TS.07.OPR.005))
